

## ԿԱՐԾԻՔ

**Ռուզաննա Խաչատուրի Պապյանի «Հայաստանում երեխաների և դեռահասների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող պրոզնոստիկ գործոնների գնահատումը» ատենախոսական աշխատանքի վերաբերյալ**

### **Թեմայի արդիականությունը**

Ռուզաննա Խաչատուրի Պապյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է ոսկրամկանային սարկոմաներին, որոնք համեմատաբար հազվադեպ, սակայն կլինիկական մեծ նշանակություն ունեցող չարորակ նորագոյացություններ են և առավել հաճախ հանդիպում են երեխաների, դեռահասների և երիտասարդների շրջանում: Հիվանդության ազդեցիվ բնույթը և բուժման բարդությունը պայմանավորում են դրա ուսումնասիրության շարունակական արդիականությունը:

Հիվանդության բուժումը պահանջում է համալիր և բազմամասնագիտական մոտեցում՝ ներառելով քիմիաթերապիա, վիրաբուժական միջամտություններ և երբեմն ճառագայթային թերապիա: Չնայած վերջին տասնամյակներում գրանցված առաջընթացին, ոսկրամկանային սարկոմաների բուժման արդյունքները տարբեր հիվանդների մոտ զգալիորեն տարբերվում են: Սա պայմանավորված է ինչպես ուռուցքների կենսաբանական տարբերություններով, այնպես էլ բուժման կազմակերպման, ախտորոշման հասանելիության և առողջապահական համակարգի մի շարք գործոններով: Մասնավորապես, հիվանդության վաղ ախտորոշման դժվարությունները, մասնագիտացված կենտրոնների սահմանափակ հասանելիությունը և ժամանակակից ախտորոշիչ մեթոդների կիրառման տարբերությունները կարող են զգալի ազդեցություն ունենալ բուժման արդյունավետության վրա:

Մանկաբուժական պրակտիկայում առանձնահատուկ նշանակություն ունեն հիվանդության վաղ հայտնաբերումը, ախտորոշման ժամանակակից մեթոդների հասանելիությունը և բուժման կազմակերպումը մասնագիտացված կենտրոններում, քանի որ այս գործոնները կարող են զգալիորեն ազդել երեխաների և երիտասարդների բուժման արդյունավետության և երկարաժամկետ ապրելիության վրա:

### **Աշխատանքի գիտագործնական նշանակությունը**

Աշխատության շրջանակներում կատարվել է Հայաստանում երեխաների և երիտասարդների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ախտորոշման և բուժման

ներկայիս իրավիճակի համակողմանի վերլուծություն՝ անդրադառնալով ինչպես կլինիկական առանձնահատկություններին, այնպես էլ առողջապահական համակարգի մակարդակում առկա կազմակերպչական խնդիրներին: Հատուկ ուշադրություն է դարձվել ախտորոշման հասանելիությանը, բուժման կազմակերպման առանձնահատկություններին և այն սահմանափակումներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ բուժման արդյունքների վրա:

Այս տեսանկյունից ներկայացված ատենախոսական աշխատանքը ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Ատենախոսական աշխատանքում հստակ ձևակերպված է նպատակ՝ գնահատել երեխաների և երիտասարդների շրջանում ոսկրամկանային սարկոմաների դեպքում ապրելիության վրա ազդող հիմնական պրոգնոստիկ գործոնները: Աշխատանքի նպատակին համապատասխան առաջադրվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծման տրամաբանությունն ու իրականացումը հետևողականորեն արտացոլված են հետազոտության ողջ ընթացքում: Այն է՝ ուսումնասիրել հիվանդների կլինիկական և համաճարակաբանական առանձնահատկությունները, պարզել պաթոմորֆոլոգիական առանձնահատկությունները, գնահատել բուժված հիվանդների ապրելիության ցուցանիշները և մշակել սահմանափակ ռեսուրսներին ադապտացված ոսկրամկանային սարկոմաների վաղ ախտորոշման և բուժման բարելավմանը միտված ընթացակարգեր:

### **Աշխատանքի ընդհանուր նկարագրությունը**

Ռ. Խ. Պապյանի ատենախոսությունն ունի ավանդական կառուցվածք: Աշխատանքը շարադրված է 120 էջի սահմաններում և ներառում է 37 գծապատկեր: Այն բաղկացած է ներածությունից, գրականության վերլուծությունից (գլուխ I), հետազոտության նյութից և մեթոդներից (գլուխ II), հետազոտության արդյունքներից (գլուխ III), ինչպես նաև քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Գրականության ցանկում ընդգրկված են 116 սկզբնաղբյուրներ:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորում է աշխատանքի արդիականությունը, ձևակերպում հետազոտության նպատակն ու հիմնական խնդիրները, սահմանում գիտական նորույթը և գիտագործնական նշանակությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված ոսկրամկանային սարկոմաների՝ որպես մանկական և երիտասարդ տարիքում հանդիպող հազվադեպ, սակայն ծանր ընթացքով և բարդ վարման պահանջող հիվանդությունների խմբի կարևորությանը: Հեղինակը շեշտադրում է նաև այն հանգամանքը, որ սահմանափակ ռեսուրսներով առողջապահական համակարգերում այս հիվանդությունների ախտորոշումն ու բուժումը շարունակում են մնալ բազմագործոն մարտահրավեր, իսկ միջառողջապահական և միջինստիտուցիոնալ

համագործակցությունները կարող են ունենալ էական դեր բուժման արդյունքների բարելավման գործում:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է գրականության վերլուծությանը: Հեղինակը համակարգված կերպով ներկայացրել է ոսկրամկանային սարկոմաների ժամանակակից դասակարգումը, համաճարակաբանական տվյալները, կլինիկա-ախտաբանական առանձնահատկությունները, ախտորոշման սկզբունքները և բուժման արդի մոտեցումները: Առանձին ենթաբաժիններով լուսաբանվել են փափուկ հյուսվածքային և ոսկրային սարկոմաների վարման առանձնահատկությունները զարգացած և զարգացող երկրներում, ինչպես նաև նորագույն բուժական մոտեցումները, ներառյալ թիրախային և իմունոթերապևտիկ ուղղությունները: Գրականության ակնարկում կարևոր տեղ է հատկացվել նաև հեռահար բժշկության, բազմամասնագիտական համագործակցության և միջազգային փորձի ներդրման հարցերին, որոնք հատկապես արդիական են մանկաբուժական ուռուցքաբանության ոլորտում և մեծ նշանակություն ունեն սահմանափակ ռեսուրսների պայմաններում բուժօգնության կազմակերպման տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, առաջին գլուխը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ և արտացոլում է թեմայի վերաբերյալ հեղինակի լավ իրազեկվածությունը:

Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլուխը նկարագրում են առաջադրաքննների լուծման համար օգտագործվող նյութերն ու հետազոտական մեթոդները: Նկարագրված են հիվանդների ընդգրկման սկզբունքները, հետազոտության իրականացման փուլերը, ուսումնասիրված հիմնական ցուցանիշները և կիրառված վիճակագրական մեթոդները: Կիրառված մեթոդաբանական մոտեցումները բավարար չափով հիմնավորված են, իսկ վիճակագրական վերլուծության գործիքակազմը համապատասխանում է նմանատիպ հետազոտություններին ներկայացվող ժամանակակից պահանջներին:

Երրորդ գլուխը նվիրված է սեփական հետազոտության արդյունքներին: Մասնավորապես, ներկայացված է հիվանդների կլինիկա-ախտաբանական բնութագրերը, տարիքային առանձնահատկությունները, ուռուցքների տեղակայումները, հյուսվածաբանական ենթատեսակները, ինչպես նաև կիրառված բուժական մոտեցումների առանձնահատկությունները և դրանց արդյունքները: Առանձին վերլուծվել են ապրելիության ցուցանիշները տարբեր տարիքային խմբերում և հիվանդության փուլերում, ինչպես նաև գնահատվել են ելքի վրա ազդեցություն ունեցող մի շարք գործոններ: Առանձին բաժիններով վերլուծված են կիրառված բուժման մեթոդները՝ ներառյալ վիրահատական բուժումը, քիմիաթերապևտիկ և ճառագայթային բուժման տարբերակները, ինչպես նաև դրանց արդյունավետությունը: Հատուկ ուշադրություն է դարձված հիվանդների ապրելիության ցուցանիշների գնահատմանը՝ ըստ տարիքային խմբերի, հիվանդության փուլերի և ուռուցքի հյուսվածաբանական ենթատեսակների:

Մասնավորապես, ցույց է տրվել, որ ախտորոշման պահին հիվանդության տարածվածությունը, հիվանդների տարիքային խումբը, ուռուցքի հյուսվածաբանական ենթատեսակը և հետքիմիաթերապևտիկ ներկրոզի աստիճանը հանդիսանում են ապրելիության վրա ազդեցություն ունեցող կարևոր անկախ պրոգնոստիկ գործոններ: Հատկանշական է, որ արդյունքների ներկայացումը միայն նկարագրական բնույթ չի կրում, այլ ուղղված է նաև առավել կարևոր պրոգնոստիկ օրինաչափությունների բացահայտմանը, ինչը մեծացնում է աշխատանքի գիտական արժեքը:

Քննարկման բաժնում հեղինակը համակողմանիորեն վերլուծում է ստացված արդյունքները և դրանք համադրում միջազգային գրականության տվյալների հետ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված ոչ միայն զարգացած երկրների, այլև զարգացող և անցումային առողջապահական համակարգ ունեցող պետությունների փորձին, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական գնահատել Հայաստանի պայմաններում արձանագրված արդյունքները: Հեղինակը համեմատական վերլուծության մեջ ներառում է հատկապես ԱՊՀ տարածաշրջանի երկրների տվյալները, որտեղ, ինչպես և Հայաստանում, առկա են առողջապահական համակարգի կազմակերպման, վաղ ախտորոշման հասանելիության, մասնագիտացված կենտրոնների կենտրոնացվածության և բուժման ժամանակակից մեթոդների կիրառման հետ կապված նմանատիպ սահմանափակումներ:

Քննարկման ընթացքում ցույց է տրվում, որ Հայաստանի Հանրապետությունում ստացված ապրելիության ցուցանիշները և բուժման արդյունքները պետք է գնահատվեն ոչ միայն բարձր եկամուտ ունեցող երկրների տվյալների համատեքստում, այլև համադրվեն այն երկրների փորձի հետ, որոնք ունեն համանման ռեսուրսային և կառուցվածքային պայմաններ: Այդ առումով կարևոր է, որ հեղինակն անդրադառնում է Ռուսաստանի, Բելառուսի, Վրաստանի և այլ տարածաշրջանային օրինակների՝ փորձելով հասկանալ, թե ինչ գործոններով կարող են պայմանավորված լինել ապրելիության տարբերությունները տարբեր երկրներում: Նման համեմատությունը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ դիտարկել Հայաստանի ձեռքբերումներն ու առկա խնդիրները:

Հատկանշական է, որ հեղինակը չի սահմանափակվում միայն թվային տարբերությունների արձանագրմամբ, այլ փորձում է մեկնաբանել, թե ինչու են որոշ երկրներում, այդ թվում նաև ԱՊՀ առանձին կենտրոններում, լրկալիզացված ձևերի դեպքում արձանագրվում համեմատաբար ավելի բարձր ապրելիության ցուցանիշներ, մինչդեռ մետաստատիկ հիվանդության պարագայում արդյունքները մնում են էականորեն ցածր: Այս համատեքստում քննարկվում են հիվանդության ախտորոշման պահին տարածվածության աստիճանը, պաթոմորֆոլոգիական և մոլեկուլային ճշգրիտ ախտորոշման հասանելիությունը, բազմամասնագիտական թիմային աշխատանքի կազմակերպվածությունը, բուժման ստանդարտացված մոտեցումների կիրառումը, ինչպես

նաև բուժման ուշացումների և ընդհատումների հնարավոր ազդեցությունը վերջնական ելքերի վրա:

Առանձին կարևորություն ունի այն, որ քննարկման բաժնում հեղինակը վերլուծում է ԱՊՀ երկրների տվյալները ոչ թե պարզապես որպես ֆոնային տեղեկատվություն, այլ որպես համեմատական հենք Հայաստանի համար: Մասնավորապես, ընդգծվում է, որ Ռուսաստանի և Բելառուսի առանձին կենտրոններում ստացված ապրելիության արդյունքները որոշ դեպքերում մոտենում են եվրոպական ցուցանիշներին, ինչը ցույց է տալիս, որ նույնիսկ սահմանափակ ռեսուրսների պայմաններում կենտրոնացված, մասնագիտացված և համակցված մոտեցումների ներդրումը կարող է բարելավել բուժման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, այդ երկրների տվյալները նաև ցույց են տալիս, որ մետաստատիկ ձևերի, ուշ ախտորոշման և բուժման կազմակերպման դժվարությունների պարագայում ապրելիության ցուցանիշները շարունակում են մնալ անբավարար, ինչը բնորոշ է նաև տարածաշրջանի մյուս երկրներին:

### **Գիտական դրույթների և եզրակացությունների հիմնավորումը և հավաստիությունը**

Ստացված արդյունքների վավերությունն ու հավաստիությունը պայմանավորված են հետազոտության ընթացքում կիրառված ժամանակակից գիտական մեթոդների և վիճակագրական վերլուծության համալիր կիրառմամբ: Ատենախոսական աշխատանքում դրված նպատակին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են ժամանակակից կլինիկական, պաթոմորֆոլոգիական և վիճակագրական հետազոտական մեթոդներ, որոնք համապատասխանում են նմանատիպ գիտական ուսումնասիրություններին ներկայացվող ընդունված պահանջներին:

Հետազոտության ընթացքում ստացված տվյալների վիճակագրական մշակումը իրականացվել է համապատասխան ծրագրային փաթեթների կիրառմամբ, իսկ արդյունքների գնահատման ժամանակ օգտագործվել են ժամանակակից կենսավիճակագրական մոտեցումներ: Տվյալները համարվել են վիճակագրորեն նշանակալի այն դեպքերում, երբ առաջին տիպի սխալի հավանականությունը (p) եղել է փոքր 0.05-ից:

Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել են միջազգային և տարածաշրջանային գիտաժողովներում, որտեղ արժանացել են մասնագիտական քննարկման: Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է սեղմագրում և հեղինակային գիտական հրապարակումներում:

Ատենախոսության սեղմագիրը կազմված է 22 էջից և ներառում է հայերեն, ռուսերեն և անգլերեն համառոտ ամփոփումներ: Հետազոտության արդյունքների հիման վրա տպագրվել է 26 գիտական աշխատանք (12 հոդված և 14 թեզիս), որոնք հրատարակվել են մասնագիտական գիտական հանդեսներում և ներկայացվել միջազգային գիտական հարթակներում:

Եզրակացությունները տրամաբանական կերպով բխում են հետազոտության արդյունքներից և գիտականորեն հիմնավորված են:

Սկզբունքային դիտողություններ չկան, սակայն նպատակահարմար է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

1. Ատենախոսության վերնագրում նշվում է, որ հետազոտությունը վերաբերում է երեխաների և դեռահասների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող պրոզնոստիկ գործոնների գնահատմանը: Սակայն հետազոտության նյութում ընդգրկված են նաև մինչև 25 տարեկան հիվանդներ: Միացյալ ազգերի կազմակերպության հոչակագրով, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տրված են հետևյալ սահմանումները՝ մանկական տարիք 0-18, դեռահասային տարիք՝ 10-18, երիտասարդություն՝ 15-24: Համապատասխանաբար, թեզի անվանումը իրավաբանական առումով կոռեկտ չէ, և ճիշտ անվանումը կլիներ՝ երեխաների, դեռահասների և երիտասարդների շրջանում:
2. Եզրակացությունների մեջ ճիշտ կլիներ, որպես առանձին եզրակացություն ներկայացնել հիվանդության ենթատեսակների հանդիպման հաճախականությունը, ինչը կընդգծեր այդ տվյալների կարևորությունը:
3. Հաշվի առնելով աշխատանքի ընթացքում կատարված կազմակերպչական բարելավումները, ցանկալի կլիներ ավելի ծավալուն ներկայացնել այն և դրա ազդեցությունը հիվանդությունների ելքի վրա:

### **Եզրակացություն**

Ելնելով ներկայացված վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, որ «Հայաստանում երեխաների և դեռահասների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող պրոզնոստիկ գործոնների գնահատումը» թեմայով Բուզաննա Խաչատուրի Պապյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է մանկաբուժական ուռուցքաբանության կարևոր և արդիական խնդրի ուսումնասիրմանը: Աշխատանքը առանձնանում է իր ծավալով, իրականացված վերլուծության խորությամբ և ստացված արդյունքների գիտական հիմնավորվածությամբ:

Հետազոտության ընթացքում ստացված տվյալները հավաստի են և ստացվել են ժամանակակից գիտական և վիճակագրական մեթոդների կիրառմամբ, իսկ կատարված

վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել ոսկրամկանային սարկոմաների դեպքում ապրելիության վրա ազդող մի շարք կարևոր գործոններ: Ստացված արդյունքները ունեն ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն:

Ընդհանուր առմամբ, ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Ռուզաննա Խաչատուրի Պապյանը, արժանի է ԺԴ.00.08 «Ուռուցքաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊԲՀ մանկաբուժության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.՝

Ս.Գ.Սարգսյան

Ս.Գ.Սարգսյանի ստորագրության իսկությունը հաստատում են՝

ԵՊԲՀ Գիտական քարտուղար, պրոֆ., բ.գ.դ.՝



Տ.Գ.Ավագյան

« 16 » մարտ 2026թ.